

ՏԵՂԵԿԱԳԻՐ**ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՅ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ
(2023 - 2024)****15 Յունիս, 2024, Ամսվերջի Հանդես**

Գերաշնորհ Տ. Սեւան Արք. Ղարիպեան Լուսարարապետ Սուրբ Աթոռոյս,
Հոգեշնորհ եւ Արժանապատիւ Հայրեր,
Միութիւններու եւ վարչութիւններու յարգարժան ներկայացուցիչներ,
Յարգելի ուսուցիչներ, ծնողներ, ներկաներ եւ շատ սիրելի աշակերտներ

Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան հովանիի ներքոյ գործող մեր Սրբոց Թարգմանչաց վարժարանին համար 2023-2024 ուսումնական տարին մօտեցած է իր կանխագծուած աւարտին: Տարին կ'ամփոփենք մեր ակընկալիքներն իրագործած գոհունակ սրտով եւ սպասումով յաջորդ ուսումնական տարուան, որու ընթացքին եւս միասնական ջանքերով պիտի փորձենք աշխատիլ ի նպաստ այս յոյսի փարոս հաստատութեան կենսագործունէութեան եւ յարատեւութեան:

Սիրելի՛ շրջանաւարտներ, սրտիս ամենաջերմ մաղթանքները կ'ուղղեմ ձեզ, որպէս սպասուծ բերքը մեր այս կրթական անդաստանին: Կը յուսամ եւ կը հաւատամ, որ Թարգմանչաց վարժարանէն ներս ձեր ուսումնառութեան տարիները աներկբայօրէն օգտակար եղան ամենուդ՝ առաւել գիտուն եւ փորձառու դարձնելով ձեզի: Այսօր ձեր ամբարած գիտելիքներով եւ ձեռք բերած հնարաւոր հմտութիւններով դուք պատրաստ էք վեր քաշելու ձեր խարիսխները այս հանգրուանէն, որ կը կոչենք Սրբոց Թարգմանչաց վարժարան եւ դուրս գալու կեանքի բաց ծով, ուր պիտի հանդիպիք բազմաթիւ փորձութիւններու եւ դժուարութիւններու, ինչպէս նաեւ երջանիկ եւ ուրախ պահերու: Լիայոյս ենք, որ այս կրթական օճախէն եւ վանքէն ներս ձեր աչքերու առջեւ եղած հոգեւորականաց դասու օրինակներուն եւ մեր փորձառու ուսուցիչներու փոխանցած գիտելիքներուն ապաւինելով պիտի կարողանաք յաղթահարել ամէն դժուարութիւն, որ պիտի հանդիպիք ձեր յետագայ կեանքի ընթացքին:

Սիրելի՛ շրջանաւարտներ, կը մաղթե՛մ, կը յորդորե՛մ, կը պահանջե՛մ, որ ձեր յետագայ կեանքը, ձեր ապագան երբեք չնախագծէք առանց մեսրոպեան սրբազան գիրերու, որոնք որպէս անգին ժառանգութիւն ստացած ենք մեր նախնիքներէն: Այս առթիւ, որպէս տեսուչ այս կրթական հաստատութեան, պիտի ցանկայի, որ այս դպրոցին մէջ ձեզի տրուած գիտելիքները որ ծրարած եւ պահած էք Տիրոջ կողմէ քանքարներ ստացած անձերու նման, որոնք դրամները հողին տակ թաքցուցին եւ ոչինչ աւելցուցին ստացածին վրայ, ի բարին օգտագործէք ձեր յետագայ կեանքին մէջ եւ բարութիւն սփռէք ձեր շուրջը՝ նմանելով քանքարներ ստացած այն մէկուն, որ խելամտօրէն գործածեց ստացած դրամները՝ կրկնապատկելով ատոնք:

Յարգելի՛ ուսուցիչներ, բոլորս ալ քաջ գիտենք, որ ձեր առաքելութիւնը դիւրին չէ,

այլ նուիրում եւ անձնագործություն կը պահանջէ, բան մը, որ դուք կը փաստէք ձեր ամենօրեայ աշխատանքով եւ ցուցաբերած անկեղծ սիրով՝ առ մեր աշակերտները եւ Թարգմանչաց վարժարանը: Հետեւաբար, մեր գնահատանքի եւ շնորհակալութեան խօսքերը կ'ուղղենք վարժարանիս փոխ-տեսուչ՝ Տիար Միհրան Տէր Մաթոսեանին, քարտուղարութեան՝ Օրիորդ Ազնիւ Պաղտասարեանին եւ Տիկին Մարլէն Սաիտին, ինչպէս նաեւ ուսուցչական կազմին եւ վարժարանիս ամբողջ աշխատակազմին: Կը մաղթենք, որ Տէր Յիսուս Քրիստոս առաւել ուժ, եռանդ եւ համբերություն պարգեւէ եւ իր օրհնութեան մէջ պահէ եւ պահպանէ ձեզ եւ ձեր ընտանեկան պարագաները:

Մեր որդիական խորին շնորհակալությունները կ'ուղենք յայտնել Երուսաղէմի Առաքելական Սուրբ Աթոռոյս Գահակալ՝ Ամենապատիւ Տ. Նուրհան Արքեպիսկոպոս Մանուկեանին իր հայրական հոգածութեան եւ հովանաւորութեան համար, ինչպէս նաեւ Սուրբ Աթոռոյս Լուսարարապետ՝ Գերաշնորհ Տ. Սեւան Արքեպիսկոպոս Ղարիպեանին եւ Սրբոց Յակոբեանց Միաբանութեան մեր սիրելի Հայրերուն՝ իրենց օժանդակութեան համար՝ ի յարատեւություն կրթական մեր այս սրբազան հաստատութեան:

Սիրելի՛ շրջանաւարտներ, վերստին կը շնորհաւորեմ ձեզ Թարգմանչաց վարժարանն աւարտելու կապակցութեամբ՝ մաղթելով բարի ընթացք եւ բիւր յաջողություններ ձեր կեանքի յետագայ օրերուն, եւ որպէս սաններ այս հաստատութեան վերջին անգամ կը յորդորեմ, որ ձեր կեանքի բոլոր հանգրուաններուն ըլլաք առաքինի, ազնիւ, արդարադատ եւ լայնասիրտ. Տէր ընդ ձեզ:

2024 թուականի ամռան ընթացքին Սրբոց Թարգմանչաց վարժարանէն ներս կատարուեցան կարգ մը նորոգություններ, մասնաւորապէս նորոգուեցան ուսուչիներու եւ տղոց պետքարանները, ներկուեցան երկրորդ յարկի դասասենեակներու պատերը եւ ելեկտրականութեան հին թելերը նորերով փոխարինուեցան:

Դպրոցական վերամուտէն առաջ ունեցանք ուսուցչական հանգիպումներ՝ քննարկելու ուսումնական ծրագիրներն ու մեթոտները:

2023-2024 ուսումնական տարեշրջանի վերամուտը տեղի ունեցաւ 4 Սեպտեմբեր, 2023-ին, ներկայութեամբ Սուրբ Աթոռոյս Լուսարարապետ՝ Գերաշնորհ Տ. Սեւան Արքեպիսկոպոս Ղարիպեանի եւ Սրբոց Յակոբեանց Միաբանութեան անդամներու:

Այս տարի մեր աշակերտութեան ընդհանուր թիւը եղաւ 182, բաժնուած հետեւեալ ձեւով.

	Մանչ	Աղջիկ	Գումար
Մանկապարտէզ	23	27	50
Նախակրթարան	30	33	63
Երկրորդական	32	37	69
Համագումար	85	97	182

Ուսուցչական կազմը կը բաղկանայ 32 ուսուցիչ-ուսուցչուհիներէ:

Սրբոց Թարգմանչաց վարժարանը կ'առաջարկէ երեք A Level-է եւ եօթ O Level-է բաղկացած ծրագիր, որ կը դիւրացնէ մեր շրջանաւարտներուն մուտքը տեղական եւ արտասահմանեան համալսարաններ: Երեք A Level-ի նիւթերն են. Արաբերէն, Ուսողություն եւ Հոգեբանություն, իսկ եօթ O Level-ի նիւթերն են. Ուսողություն, Կենսաբանություն, Քիմիաբանություն, Բնագիտություն, Ընդհանուր Ազգաց Պատմություն, Անգլերէն

լեզու եւ Անգլերէն գրականութիւն:

2022-2023 ուսումնական տարեշրջանի աւարտին վարժարանիս 10-րդ, 11-րդ եւ 12-րդ դասարաններու աշակերտները Արաբերէն լեզուի, Հոգեբանութեան եւ Ուսողութեան A Level GCE, եւ Անգլերէն լեզուի, Ուսողութեան, Քիմիաբանութեան, Ընդհանուր Ազգաց պատմութեան, Բնագիտութեան եւ Կենսաբանութեան IGCSE քննութիւններ յանձնեցին եւ գոհացուցիչ արդիւնքներով յաջողեցան:

2023 թուականի Հոկտեմբեր 7-էն սկսեալ «Համասի»-ի, «Հըզպալլայ»-ի եւ Իսրայէլի միջեւ բռնկած հակամարտութեան եւ երկրի անկայուն վիճակին պատճառով ստիպւեցանք Հոկտեմբեր 11-26 անցնիլ հեռավար դասաւանդման ծրագրին: Հոկտեմբեր 9-ին ունեցանք հեռավար ուսուցչական ժողով՝ քննարկելու հեռավար ուսուցման ծրագրին անցնելու պայմաններն ու հնարաւորութիւնները: Հետեւելով Կրթութեան եւ գիտութեան նախարարութեան թելադրութիւններուն՝ վարժարանիս տեսչութիւնը ուսուցիչներու եւ աշակերտներու անվտանգութեան նկատառումով ապահով տարածք պատրաստեց վարժարանէն ներս, արտակարգ իրավիճակներու պարագային օգնագործելու համար: Հոկտեմբեր 26-էն սկսեալ վարժարանս սկսաւ գործել ըստ սովորականի՝ աշակերտները շաբաթականացին ուսումը դպրոցէն ներս:

Ուսումնական տարեշրջանի ընթացքին կազմակերպուեցան զանազան երաժշտական, դաստիարակչական եւ գեղարուեստական միջոցառումներ: Հայաստանի Հանրապետութեան Անկախութեան տարեդարձին առիթով Նախակրթարանի աշակերտները պատրաստեցին ձեռագիր աշխատանքներ՝ նուիրուած Հայաստանին եւ Արցախին: Կազմակերպուեցան նաեւ «Ֆութպօլի», «Պասգէթպօլի» եւ «Ուօլի Պօլ»-ի մրցումներ՝ մասնակցութեամբ Երկրորդականի 7-12-րդ դասարաններու աշակերտներուն:

Մեր աշակերտները մասնակցեցան նաեւ բանավիճային մրցախաղի՝ ընդդէմ Երուսաղէմի Քրիստոնեայ դպրոցներու եւ արձանագրեցին մեծ յաջողութիւններ: Հայոց Յեղասպանութեան 109-րդ տարելիցին առիթով տեղի ունեցաւ սգահանդէս Կիւլպէնկեան Մատենադարանին առջեւ գտնուող Յեղասպանութեան նահատակներու յիշատակին նուիրուած խաչքարին առջեւ, ապա աշակերտները ծաղիկներ դրին խաչքարին առջեւ: Թատերական ներկայացումներով նշուեցան Բուն Բարեկենդանը եւ Մայրերու օրը: Դժբախտաբար, պատերազմին պատճառով չկրցանք տօնել Սրբոց Թարգմանչաց տօնը, իսկ Ամանորի եւ Սուրբ Ծննդեան տօներու առիթով մեր աշակերտները զարդարեցին իրենց դասարանները եւ Կաղանդ Պապուկը մէկ-մէկ այցելեց անոնց դասարաններ:

Ուսումնական տարեշրջանի ընթացքին ունեցանք ուսուցչական ժողովներ՝ քննարկելու աշակերտութեան յառաջդիմութեան վերաբերեալ հարցեր, ծնողաց ժողովներ, որոնց ընթացքին մանրամասնեալ տեղեկութիւններ տրուեցան անոնց՝ իրենց զաւակներու կրթութեան վերաբերեալ եւ ստացան իրենց յուզող հարցերու պատասխանները:

Իսրայէլի առողջապահութեան նախարարութեան կողմէ նշանակուած «Նաթալի» ընկերութիւնը կազմակերպեց կարգ մը դասարաններու աշակերտներու տեսողութեան եւ լսողութեան քննութիւն, ինչպէս նաեւ ապահովեց անոնց տարիքին համապատասխան պատուաստումները:

Կազմակերպուեցան նաեւ դասախօսութիւններ առողջութեան, մաքրութեան եւ ընկերային վարմունքի վերաբերեալ, նաեւ առաջին օգնութեան դասընթացք 10-րդ դասարանի աշակերտներուն համար: Շարունակուեցան եկեղեցական երաժշտութեան, շա-

րականներու դասընթացքները Նախակրթարանի 4-րդ, 5-րդ եւ 6-րդ դասարաններու աշակերտներուն համար:

Ինչպէս նախորդ տարիներուն, այս տարի եւս վարժարանիս սաները իրենց մասնակցութիւնը բերին եկեղեցական տօներուն եւ թափօրներուն:

Մանկապարտէզի աւարտական հանդէսը տեղի ունեցաւ 25 Մայիս, 2024-ին: 14 փոքրիկներ գալ տարի պիտի անցնի Նախակրթարանի բաժին, իսկ այսօր, 14 Յունիս, 2024-ին տեղի կ'ունենայ Ամալերջի շրջանաւարտից հանդէսը եւ 11 աշակերտներ կ'աւարտեն իրենց 12 տարուայ ուսումնառութեան շրջանը:

ԱՐՏԷՆ ՔԱՀԱՆԱՅ ԱՐԱՀԱՄԵԱՆ

Տեսուչ Սրբոց Թարգմանչաց Վարժարանի

